

Ա Մ Ա Վ Ե Ր Զ Ի Հ Ա Ն Կ Է Ս

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՄՄԱՆԻ Վ. ԻԻԶՊԱՇԵԼՆ - Գ. ԿԻԼՊԷՆԿԵԱՆ

ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

Հ. Բ. Ը. Միութեան Ամմանի Վ. Իւզպաշեան Նախագիծարանի և Գ. Կիւլպէնկեան Մանկապարտէզի Ամսփերի Հանդէսը տեղի ունեցաւ Ուրբաթ, 8 Յունիս, կէսօրէ ետք ժամը 5ին, վարժարանի սրահին մէջ, բարձր հովանաւորութեամբ Ս. Աթառայ Ամենապատիւ Ս. Գատրիարք Զօր և ի ներկայութեան ծնողներու, բարերարներու և հիւրերու:

Ցորդանշանեան քայլերգէն ետք, Միութեան քայլերգով բեմ բարձրացան 13 շրջաւանաւորներ և ոտացան իրենց վիճակները ձեռամբ վարժարանիս Տեսչին՝ Լազշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեանի: Ապա կատարուեցաւ տարեկան տեղեկագրի ընթերցում և ելեմտից հաշուետուութիւն: Իր տեղեկագրին մէջ Տեսչ. Լալոսը բարձր խորին շնորհակալութիւններ յայտնեց Ամեն. Տ. Նիլիէ Արքեպս. Տէրութեանի՝ Բարեկամ Գատրիարքին Լայոց Տրուսաղէմի, որ հովուապետի մը հոգածութեամբ իր գուրգուրանքին առարկան զարձուցեր է մեր վարժարանը, Հ. Բ. Ը. Մ. Ի և Կիւլպէնկեան շինարարութեան իմաստուն զեկամարներուն, ու վերապէս բոլոր բարերարներուն անխտիր՝ որոնց ներթափան թէ բարոյական օժանդակութիւններուն կը պարտի այս վարժարանը իր գոյութիւնը տարիներէ ի վեր: Ան լայնօրէն անդրադարձաւ նաև Լայոս առուցիչներուն վստահուած կարեւոր դերին ու բարձրօրէն գնահատեց անոնց կատարած անձնուէր աշխատանքները վարժարանէն ներս:

Հանդէսին պաշտօնական երկրորդ մասին բեմ բարձրացան Մաղիկ դասարանի 20 փոքրիկները և իրենց երգերով ու ուսանաւորներով ցոյց տուին Լայոց լեզուին մօր կաթիլէն անոյշ ըլլալը ու խորապէս տպաւորեցին ներկաները: Հրաժեշտի երգով այս փոքրիկները խոստացան երբեք չմոռնալ այն ջերմ լարկը, ուր եկած էին հազիւ քայլել ու խօսիլ սկսած, ու ահա արդէն կը մեկնէին հայոց լե-

զուն փորագրած իրենց մանուկ միտքերուն ու սիրտերուն մէջ:

Գեղարուեստական բաժինը բաւական ճոխ ու հետաքրքրական էր: Նշան խմբերգներ, ստանաւորներ, հայկական պար, շրջանակներով մարզանք և արարերէն ներկայացում: Ներկաներուն մեծ հառչք պատճառեց Մաղիկ դասարանի կողմէ պատրաստուած Վարին վերջը՝ երաժշտական ներկայացումը, ուր փոքրիկներ ամենայն համարձակութեամբ կատարեցին իրենց դերերը, խլելով բոլոր ծափահարութիւնները:

Մանկապարտէզականութիւն ՏԿ. Տիգրանուհի Զգրգնեան խնամքով պատրաստած էր հանդէսին երաժշտական բոլոր բաժինները, որոնց կ'ընկերանար դաշնակով:

Հանդէսը փակուեցաւ Լազշ. Տեսչ. Զօր Գեղաման խօսքով: Ան շնորհաւորեց շրջաւանաւորները, անոնց թելադրեց չմոռնալ իրենց մայրերի լեզուն, սիրել հայրենիքը և կառչած մնալ ազգային տոհմիկ անանդութիւններուն:

Հանդէսէն ետք, վարժարանի բակին մէջ ներկաները հիւրասիրուեցան կարկանդակով և զովացուցիչներով:

Ստորև կու տանք անուանացանկը 1978 - 1979 տարեշրջանի շրջաւանաւորներուն. —

Առատուր Առատուրեան
Արամ Գեուեան
Կարօ Չաթմաճեան
Միքայէլ Նփրեմեան
Սեւան Գազանեան
Վիգէն Մարգարեան
Տիգրան Գոշոյեան
Ֆիրայ Ֆիրայրի
Անտէլ Գալիօղեան
Անի Գալիօղեան
Անի Գեուեան
Մարալ Գաւայեան
Մարալ Մարգարեան